

ԱՂԵԱՏԸ ՄԽԻԹԱՐԵԼՈՒ...

Դուն, ո՛վ աղփատ եւ չփառք, ինչո՞ւ ուրեմն նեղութեան մէջ ես, կը տխրիս եւ կը տագնապիս...

Յովնան Մանդակունի

ԱՐԾԻԻ



Արծիւի երկրորդ խորհրդանշանը մենք կը տեսնենք ոսկեայ որպէս...

Չարդ արծիւը կը խորհրդանշէ կաթողիկոսներուն հոգեւոր գերագոյն իշխանութիւնը:

Արծիւի գործածութիւնը ընդհանրացած է եւ երուսաղեմի պատրիարքներուն մօտ...

Ա Ղ Օ Թ Ք

Տէ՛ր, վտակներու աղբիւր բխեցո՛ւր գլուխես եւ ոռոգե՛ մտքերուս անդաստանը, լուա՛ յանցանքներու աղտը ու սրբե՛ վերքերուս թարախը, հանե՛ մեղքերուս փուշը եւ տնկե՛ կեանքի բոյսը: Տէ՛ր, աճեցո՛ւր արդարութիւնը եւ նուաստացո՛ւր անօրէնութիւնը, մեռցո՛ւր մարմնի ցանկութիւնը եւ նորոգե՛ հոգիիս կենդանութիւնը:

Ե. Ասորի



ԲՈՒ ԽՕՍԲԵՐ ԽՄ ՈՅԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸԱԽԻՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԶ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 5 ՓԵՏՐՈՒԱՐ 2023

ԹԻՒ 6

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Եւ. 63.18-64.12 Տիւ. 1.1-11: Յի. 7.37-52

ԱԽԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻՍԻ 7.37-52

Տօնին վերջին եւ հանդիսատր օրը, Յիսուս ոտքի կանգնած՝ բարձրաձայն կ'ըսէր. Ով որ ծարուա է՝ թող ինձի գայ եւ խմէ: Ով որ ինձի կը հաւատայ, ինչպէս Սուրբ գիրքը կ'ըսէ. «Անոր սիրտէն կենսատու ջուրի գետեր պիտի բխին»:

Յիսուս ասիկա կ'ըսէր Հնոգիին համար, որ իրեն հաւատացողները պիտի ընդունէին, իսկ Հնոգին տակաւին չէր տրուած, քանի Յիսուս փառաւորուած չէր:

Ժողովուրդէն ոմանք, երբ լսեցին այս խօսքերը, ըսին. Ասիկա է ճշմարիտ մարգարէն:

Ուրիշներ կ'ըսէին. Քրիստոսն է:

Իսկ ոմանք ալ կ'ըսէին. Միթէ Գալիլեայէ՞ն պիտի գայ Քրիստոսը: Սուրբ գիրքը չ'ըսէր, թէ Քրիստոս Դաւիթ թագաւորի սերունդէն պիտի ըլլայ եւ Դաւիթի քաղաքին՝ Բեթղեհեմի մէջ պիտի ծննայ:

Եւ Յիսուսի պատճառով տարակարծութիւններ յառաջ եկան ժողովուրդին մէջ: Ոմանք ուզեցին ձեռքակալել զինք, բայց ոչ որ համարձակեցաւ ձեռք քարնել:

Երբ տաճարին պահակները վերադարձան, աւագ քահանաներն ու Փարիսեցիները հարցուցին անոնց. Ինչո՞ւ զինք հոս չբերիք:

Պահակները պատասխանեցին. Այս մարդուն պէս խօսող երբեք չենք տեսած:

Փարիսեցիները ըսին. Ի՞նչ, դո՞ւք ալ խաբուեցաք: Իշխանաւորներէն կամ Փարիսեցիներէն ոեւէ մէկը հաւատա՞ց անոր: Մեր Օրէնքը չգիտցող տգէտ ամբոխը միայն հաւատաց: Անոնք արդէն իսկ նզովուած են:

Նիկողեմնոս, Փարիսեցիներէն մէկը, որ նախապէս գիշերով եկած էր Յիսուսի մօտ, ըսաւ անոնց. Արդեօք մեր Օրէնքը մարդս կը դատե՞ նախքան զինք լսելը եւ գիտնալը, թէ ի՞նչ ըրած է:

Անոնք պատասխանեցին Նիկողեմնոսի. Միթէ դո՞ւն ալ Գալիլեայէն ես: Քննէ՛ Սուրբ գիրքերը եւ պիտի տեսնես, թէ Գալիլեայէն մարգարէ չ'ելլեր:

Ապա ամէն մարդ իր տունը դարձաւ:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ ԶԱՅՐԱՊԵՏ

Ս. Սահակ Պարթև Ս. Գրիգոր Լուսատրիչի տոհմէն, Մեծն Ներսէս Կաթողիկոսի որդին էր: Անոր ապրած կեանքի, վարած հայանպաստ քաղաքականութեան մասին մանրամասն տեղեկութիւններ կը հաղորդէ հինգերորդ դարու պատմիչ՝ Ղազար Փարպեցին իր «Հայոց պատմութիւն» աշխատութեան մէջ:

Սահակ Պարթև Հայրապետ ծնած է Կեսարիա, 384 թուականին: Սուրբը կը ստանայ յունական կրթութիւն եւ կը դառնայ հմուտ ժամանակակից երաժշտական ու հռետորական արուեստին եւ փիլիսոփայութեան: Ս. Սահակ կ'ապրի իր հօր հոգածութեան ներքեւ: Թէեւ քաջ գիտակ էր յունարէն, ասորերէն եւ պարսկերէն գրականութեան, բայց աւելի խելամուտ էր Սուրբ Գիրքի ընթերցանութեան: Կը սիրէր աղօթել եւ լեցուն էր Աստուծոյ Հոգիով ու շնորհներով: Չափահաս դառնալէն ետք շրջապատը կը ստիպէ, որ Ս. Սահակ Պարթև մնայ աշխարհական, որպէսզի շարունակուի Լուսատրիչի տոհմը: Ան յաճախ Աստուծմէ կը խնդրէ, որ իրեն արու զուակ մը պարգեւէ: Սակայն կը ծնի Սահականուշը:

Վաղարշապատ մայրաքաղաքի մայր եկեղեցոյ մէջ Աւագ Հինգշաբթի օր, պատարագի ընթացքին, Ս. Սահակ, որպէս սարկաւազ պէտք է սպասաւորեր:

Պատարագի աւարտին, երբ ան նստած էր Ս. Մեղանին մօտ, վրան թմրութիւն մը կու գայ: Աստուծոյ հրեշտակը լուսատր մարդու կերպարանքով կ'երեւի եւ կը յայտնուի, որ պիտի դադրի Լուսատրիչի տան քահանայապետութիւնը, իսկ Արշակունեաց թագաւորութիւնն ալ պիտի խափանուի:

Ս. Սահակ կը նուիրուի քահանայապետական կարգին եւ միաժամանակ կը հոգայ եկեղեցոյ պէտքերը: Իր Սահականուշ դուստրն ալ կնութեան կու տայ Համագասպ Մամիկոնեանին:

387-ին, կը ձեռնադրուի կաթողիկոս:

Հակառակ տիրող քաղաքական անբարենպաստ պայմաններուն, հայոց Վռամշապուհ թագաւորի եւ Ս. Սահակ կաթողիկոսի համատեղ ջանքերով երկիրը կ'ապրի խաղաղութեան մէջ ու կը բարգաւաճի: Վռամշապուհ բարեպաշտ թագաւորի օգնութեամբ ձեռնամուխ կ'ըլլայ բազմաթիւ վանքեր ու եկեղեցիներ կառուցելու եւ միաժամանակ կը նորոգէ Ս. Հռիփսիմեանց վկայարանը: Որոշ ժամանակ ետք միաբանելով Ս. Մեսրոպի հետ, կը զբաղի հայոց նշանագիրները գտնելու սուրբ գործով: Իր աշակերտները կ'ուղարկէ զանազան քաղաքներ, որպէսզի գտնեն բազմաթիւ օգտակար գիրքեր, հայերէնի թարգմանեն եւ գործածեն հայոց դպրութեան մէջ: 417-ին Ս. Սահակ կը դիմէ Կայսեր եւ Պոլսոյ պատրիարքին, իր թոռան՝ Վարդան Մամիկոնեանի հայոց սպարապետ ճանչնալու խընդրանքով: Կայսրն ու Պատրիարքը յարգելով Հայրապետը կ'ընդառաջեն անոր խնդրանքին:

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

ԱՏԵՆԸ ԿԵՂԾԱՌՈՐՈՒԹԻՒՆԸ

Անկեղծն Աստուած կեղծ սիրով սիրելը՝ մահացու մեղք է: Աստուծոյ նկատմամբ կեղծ սէր ցուցաբերողներ էին Փարիսեցիներն ու Օրէնքի ուսուցիչները, որոնց վերաբերեալ Յիսուս եօթը անգամ «կեղծաւոր» բառը կը գործածէ Մտ. 23-ի մէջ: Կեղծ էր անոնց աղօթքը (Մտ. 23.14): Կեղծ էր անոնց անձերուն եւ իրերուն արտաքին մաքրութիւնը (Մտ. 23.25): Կեղծ էր անոնց արդարութիւնը (Մտ. 23.28): Կեղծ էր անոնց սէրը նորահաւատին հանդէպ (Մտ. 23.15): Աստուած անկեղծութեան Աստուած է, ուստի ան կ'ատէ կեղծաւորն ու կեղծը: Ինչ որ ընենք՝ անկեղծօրէն սիրենք: Եթէ սիրենք՝ անկեղծօրէն աղօթենք: Եթէ աղօթենք՝ անկեղծօրէն սիրենք: Եթէ ներենք՝ անկեղծօրէն ներենք:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ

Մենք պէտք է միշտ Աւետարանի խրատով դաստիարակուինք՝ լուսաւորուելու համար, որպէսզի ձեռք ձգենք Կտակարաններուն մէջ ամփոփուած ճշմարտութեան Սուրբ Հոգիի շնորհներէն: Ուստի դադրինք դատարկ ու վայրապար քննութենէ եւ ընթանանք Սուրբ Գիրքի՝ Հին եւ Նոր Կտակարաններուն խրատներով: Սուրբ Գիրքերը մեր վարդապետներն են: Անոնց միջոցաւ ընդունինք յաւիտենական յոյսը եւ անոնցմով բարձրանանք աշխարհէն վեր:

Գրիգոր Լուսատրիչ

ԵԹԵ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒՉԵՍ...

ԵՐԲ ՀԻՒՆՊՈՒԹԵԱՆՎ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ Կ'ՈՒՉԵՍ ՉԱՅՅԵԼ, ԿԱՐԿԱ՝ Սաղմոս 6

ՏԷՐ, գայրոյթիդ մէջ մի՛ յանդիմաներ զիս, բարկութեանդ մէջ մի՛ պատժեր զիս:

Ողորմէ՛ ինձի ՏԷՐ, տկար եմ ես: Բժշկէ՛ զիս, որովհետեւ մի՛նչեւ ուկորներս կը դողամ:

Հոգիս ծանր խռովքի մէջ է, մի՛նչեւ ե՞րբ, ՏԷՐ:

Դարձի՛ր, ՏԷՐ, եւ փրկէ՛ զիս: Ազատէ՛ զիս մահուանէն, որովհետեւ ողորմած ես:

Որովհետեւ մահուան մէջ ո՞վ պիտի յիշէ քեզ, անդրաշխարհին մէջ ո՞վ շնորհակալութիւն պիտի յայտնէ քեզի:

Հեծեծելէն յոգնեցայ, ամէն գիշեր ես լացով լուացի իմ մահիճս եւ իմ արցունքներովս թրջեցի անկողինս:

Աչքս մաշեցաւ ողբալէն, տկարացաւ նեղութիւններէս:

Հեռացէ՛ք ինձմէ դուք բոլորդ, որ անիրաւութիւն կը գործէք, որովհետեւ ՏԷՐԸ լսեց իմ աղօթքս եւ խնդրանքս ընդունեց:

Թող ամչնան ու սարսափի մատնուին բոլոր թշնամիներս, ամօթով մնան եւ իսկոյն հեռանան:

Սաղմոսագիրքը, նաեւ աղօթագիրք է: Ամէն անգամ, երբ կ'ուզենք աղօթել, միտքարուիլ, հոգեպէս լիցքաւորուիլ՝ կարդանք սաղմոսագիրքէն: